ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 476

15 նոյեմբերի 2021 թվականի N -Ա

ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՏԱՆ, ՇՈՒՌՆՈՒԽ, ԲԱՐՁՐԱՎԱՆ ԵՎ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻԿԱՀՈՂԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԾԱԳԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով 2021 թվականի նոյեմբերի 15-ին Սյունիքի մարզպետարանում անցկացված խորհրդակցությունը՝

որոշում եմ.

1. Անցակետերի տեղակայման հետ կապված Գորիս համայնքի Որոտան, Շուռնուխ, Բարձրավան և Կապան համայնքի Շիկահողի ենթաշրջանի գյուղերում ծագած խնդիրների ուսումնասիրման և արագ արձագանքման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Գրիշա Խաչատրյան	-	Սյունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ
Հայկ Կարախանյան	-	Սյունիքի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ
Նունե Գևորգյան	-	Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Սմբատ Երեմյան	-	Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ
Հայկ Հարությունյան	-	Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

2. Հանձնաժողովին, մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝

1) համապատասխան ծառայությունների հետ ձեռնարկել միջոցներ նշված բնակավայրերում վառելիքի պահուստային պաշար կուտակելու ուղղությամբ,

2) վերոնշյալ բնակավայրերում արագ արձագանքման աշխատանքային խմբերի առկայությունն ապահովելու նպատակով սահմանել շուրջօրյա հերթապահություն և գործարկել շուրջօրյա թեժ գիծ,

3) յուրաքանչյուրն իր համակարգման ոլորտի մասով ուսումնասիրել և ներկայացնել ծագած խնդիրները և առաջարկություններ դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ:

3. Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ն. Գևորգյանին՝

1) Ուշադրության կենտրոնում պահել նշված բնակավայրերում առողջապահական ծառայությունների անխափան և պատշաճ մատուցումը,

2) նախապատրաստել առաջարկություն մարզպետարանի համակարգի առողջապահական հաստատությունների գործունեությունը վերակազմակերպելու և ըստ խոշորացված համայնքի կազմակերպելու վերաբերյալ.

3) առանձնակի ուշադրություն դարձնել տրանսպորտային հաղորդակցության ավանդական ուղիներից զրկված բնակավայրերում շտապ օգնության ծառայության մատուցման խնդրին:

4. Կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Հ. Հարությունյանին՝

1) ապահովել դասապրոցեսի շարունակականությունը, ըստ անհրաժեշտության այն հեռավար ձևով կազմակերպելու միջոցով,

2) ուսումնական պրոցեսում խնդիրները ճշտել կանխավ՝ ուսումնառության անընդհատականությունը պահպանելու նպատակով,

3) նախատեսել և իրականացնել մշակութային միջոցառումներ՝ սահմանամերձ գյուղերում քաղաքացիների տրամադրությունը և ոգին բարձր պահելու նպատակով,

5. Քաղաքաշինության վարչության պետ Ռ. Ավետիսյանին՝ պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն այլընտրանքային ճանապարհների շինարարության ընթացքի մասին:

6. ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Ավետիսյանին՝

1) ձեռնարկել միջոցներ համայնքների հետ համագործակցության շրջանակները ընդլայնելու, առկա և ծագող խնդիրները համատեղ արդյունավետ լուծելու ուղղությամբ,

2) ճշտել հացի օրական պահանջարկը վերը նշված բնակավայրերում և համապատասխան մարմինների ծառայությունների հետ ապահովել անխափան մատակարարումը:

7. Հանձնաժողովին՝ պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

15.11.2021

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 15
ք. Կապան